ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/13» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 17.03.2021թ.
Ժամը 11:25

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
- ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ պետի տեղակալ Ա. Մուրադյան,
գնահատողներ՝
- ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ ՋԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյան,
- ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ ՋԲ բաժնի գլխավոր մասնագետ Ա.Շլեպչյան,
հանձնաժողովի քարտուղար՝
- ՀՀ ՊՆ ԳԿ վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Մ.Ամիրյանը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/13» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանք՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
5.Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Մ.Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/13» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«Օլանդա» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/13» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանք՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են.
2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին)՝ բացառությամբ հետևյալ դեպքի.
- Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Այսուհետև՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի ե պարբերության, մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված դեպքերում, հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ, իսկ ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.1 կետի համաձայն Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի

ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

«Օլանդա» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին ներկայացված հայտով ներակայացվել է ոչ թէ բանկի կողմից թողարկված, այլ ընկերության տնօրենի կողմից հաստատված հայտի ապահովում՝ չպահպանելով Կարգի 32-րդ կետի և ընթացակարգի հրավերի պահանջները:

17.03.2021թ.-ին տեղի ունեցած նիստին՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը /18.03.2021թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի քարտուղարը նույն օրը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցեց մասնակցին՝ անհամապատասխանության շտկման վերաբերյալ:

«Օլանդա» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում ներկայացվել է պահանջվող /շտկված/ փաստաթուղթը՝ /հայտի ապահովումը կանխիկ փողի ձևով վճարված լինելու վերաբերյալ վճարման հանձնարարական/, բնօրինակից արտատպված (սքանավորված) տարբերակով:

22.03.2021թ.-ին տեղի ունեցած նիստին՝ «Օլանդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթուղթը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող (բավարար):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Մ.Ամիրյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	քանակը	միավորի գինը	Նախահաշվային ընդհանուր գինը (ՀՀ դրամ)	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
						Անվանումը	գնային առաջարկը /ՀՀ դրամ/		
							Արժեքը	ԱԱՀ-ն	Ընդհանուր գինը
1	ննջասենյակի կահույք (Մահճակալ զինվորական)	հատ	700	21,290	14,903,000	«Օլանդա» ՍՊԸ	23,275,000	4,655,000	27,930,000

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 **22.03.2020թ.-ին տեղի ունեցած նիստում՝** հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և սույն ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերի պահանջները, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/13» ծածկագրով ընթացակարգին «Օլանդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գինը գերազանցում է գնման առարկայի համար նախատեսված ֆինանսական միջոցները, հետևաբար գնահատող հանձնաժողովը որոշեց «Օլանդա» ՍՊԸ-ին **25.03.2021թ. ժամը 14:30-ին**, ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Հագրևանդի 5) հրավիրել բանակցությունների:

Հանձնաժողովի քարտուղարը նույն օրը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցեց մասնակցին կազմակերպվելիք բանակցությունների վերաբերյալ:

25.03.2021թ.-ին տեղի ունեցած նիստին՝ «Օլանդա» ՍՊԸ-ն չի ներկայացել կազմակերպված բանակցությունը, հետևաբար մասնակցի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկը մնացել է անփոփոխ:

Հաշվի առնելով վերոնշյալը և հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի է պարբերության պահանջները և քանի որ բանակցության ժամկետի ավարտին ընթացակարգի 1-ին չափաբաժնով ներկայացված գինը դեռևս գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցները, գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի /ոչ մի հայտ չի համապատասխանում հրավերի պահանջներին/ հիման վրա հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ.Ամիրյան)

4.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Մ.Ամիրյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/13» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)		Ա. Մուրադյան
Գնահատող		Ա. Պապյան
Գնահատող		Ա.Շլեպչյան
Գնումները համակարգող		Մ.Ամիրյան